ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ
GRIGOR ASATRYAN

«ՕՏԱՐՍԱՆ» ՖԵՆՈՄԵՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՄԱՍՏԻ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄԱՏԻԿԱՅՈՒՄ ՆՐԱ ՏԵՂԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

«Օտարումը» փիլիսոփայական-սոցիոլոգիական հիմնարար կատեգորիա է, որն ամենաուղղակի կերպով առնչվում է մարդու, հումանիզմի հիմնախնդրի հետ՝ հանդես գալով, սակայն, որպես հումանիզմի հակոտնյա:

Ինչպես դասական, այնպես էլ արդի փիլիսոփայական գրականության մեջ «օտարումը» դիտվում է որպես սոցիալական կյանքի ֆենոմեն, որն արտահայտում է մարդու գործունեության ու նրա արդյունքների օբյեկտիվ վերածումը մարդու վրա իշխող ու նրան թշնամական ինքնուրույն ուժի, որի հետևանքով մարդը հասարակական գործընթացի ակտիվ սուբյեկտից վերածվում է այդ գործընթացի **օբյեկտի**[1].

Հակադիր դասակարգերի բաժանված հասարակության մեջ «օտարումը» հանդես է գալիս որպես մարդու կողմից իր գործուն ընդունակությունների առարկայացման[2] պատմականորեն անցողիկ ձև: Այն կապված է հասարա-

[1] Տես Философская энциклопедия, т. 4. М., 1967, стр. 189: Մեկ այլ հեղինակավոր աղբյուրում օտարումը բնութագրվում է ըստ էության նույն կերպ, այն է՝ որպես «... սոցիալական պրոցես, որի մեջ մարդու գործունեությունն ու դրա արդյունքները վերածվում են մարդու վրա իշխող ու նրան թշնամական ինքնուրույն ուժի: Դա արտահայտվում է աշխատանքի պայմանների, միջոցների և արդյունքների նկատմամբ հսկողության բացակայության, իշխող սոցիալական խմբերի կողմից մարդուն մանիպուլյացիայի օբյեկտ դարձնելու մեջ: Օտարումը որոշակի արտացոլում է գտնում նաև անհատի գիտակցության մեջ (սոցիալական նորմերի ընկալումը որպես օտար ու թշնամական երևույթների, միայնակության զգացումը, ապատիան և այլն») (տես Большой энциклопедический словарь, М., 1998, стр. 862):

[2] Առարկայացումը և ապաառարկայացումը մարքսիստական փիլիսոփայության կատեգորիաներից են, որոնք հիմնարար նշանակություն ունեն մարդու փիլիսոփայական հիմնախնդրի հետազոտության համար: Դրանք կոչված են բացահայտելու մարդկային առարկայական գործունեության ներքին մեխանիզմը, վերցված նրա մաքուր ձևի մեջ՝ որպես մարդկային մշակույթի կեցության ընդհանուր եղանակ, որի միջոցով մարդիկ վերարտադրում են իրենց ամբողջ հասարակական կյանքը, կերտում իրենց պատմությունը:

Առարկայացումը և ապաառարկայացումը հակադրություններ են, որոնց կոնկրետ նույնությունը հենց մարդկանց առարկայական գործունեությունն է:

կական կապերի ու հարաբերությունների առարկայացման, դրանց ֆետիշացման հետ:

«Օտարում» հասկացությանն առաջին անգամ հանդիպում ենք Թոմաս Հոբսի (1588-1679), այնուհետև Ռուսոյի (1712-1778) և մի շարք այլ մտածողների մոտ, ովքեր «օտարումը» դիտում էին որպես անհատի կողմից իր իրավունքների փոխանցում քաղաքական օրգանիզմին՝ պետությանը:

Ռուսոն մատնանշում էր այդ կերպ ձևավորված հասարակական կամքի օտարվածությունը առանձին անհատի ձգտումներից, շեշտում նրա անդեմ ու ավտորիտար բնույթը[3]: Որպես մեծ լուսավորիչ ու հումանիստ՝ նա դառնու-

---

Առարկայացումը մի գործընթաց է, որի մեջ մարդկային ընդունակությունները փոխանցվում են առարկային և մարմնավորվում են նրա մեջ, որի շնորհիվ առարկան դառնում է սոցիալ-մշակութային կամ «մարդկային առարկա»:

Մարդկային գործունեությունն առարկայանում է ոչ միայն արտաքին արդյունքի, այլև բուն սուբյեկտի հատկանիշների մեջ, քանզի փոխելով արտաքին աշխարհը, մարդը փոխում է նաև ինքն իրեն:

Ապառառարկայացման ընթացքում մարդկային աշխատանքի միջոցով կյանքի կոչված առարկայի հատկանիշները, էությունը, «առարկայի տրամաբանությունը» դառնում են մարդու, նրա ընդունակությունների սեփականությունը, որի շնորհիվ դրանք զարգանում են ու լցվում առարկայական բովանդակությամբ:

Մարդն ապառառարկայացնում է ինչպես անցյալ մշակույթի ձևերը, այնպես էլ բնության երևույթները, որոնք մարդը դրանով իսկ ներառում է իր հասարակական աշխարհի մեջ:

Ընդ որում առարկայացումն ու ապառառարկայացումը պատկանում են ոչ թե "անհատ-բնություն" նատուրալիստական համակարգին, որտեղ անհատը նրա հասարակ մասն է, այլ հանդես են գալիս որպես իրականության ի սկզբանե սոցիալական բնութագրիչներ: Այստեղ մարդը բնության ունիվերսալ-համընդհանուր, առարկայական-ստեղծագործական ուժն է, բոլոր հասարակական հարաբերությունների ամբողջություն, "մարդու աշխարհ" (տե՛ս Маркс К. и Энгельс Ф. 2 изд., т. 3, М., 1955, стр. 3 и т. 1, М., 1955, стр. 414):

[3] Ըստ Ռուսոյի, մարդկային հասարակության զարգացման սկզբնական փուլում գոյություն ուներ այսպես կոչված "բնական վիճակ", որտեղ մարդիկ ազատ էին ու հավասար: Իդեալականացնելով այդ վիճակը և գովերգելով այն որպես մարդկության երջանիկ մանկություն, նա միաժամանակ գտնում էր, որ "կատարելագործման ընդունակությունը" հանգեցնում է աշխատանքի գործիքների ու եղանակների բարելավմանը, որի հետևանքով առաջանում է մասնավոր սեփականությունը, իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև ունեցվածքային անհավասարությունը:

Հաջողությունները տնտեսական գործունեության, գիտության և արվեստի բնագավառում, ըստ Ռուսոյի, անխզելիորեն կապված են մարդկանց ազատության ու երջանկության կորստի, բարոյականության ու քաղաքականության ասպարեզում հետադիմության հետ:

Սակայն մասնավոր սեփականության հարցում նա ցուցաբերում է անհետևողականություն: Մի կողմից նա գտնում էր, որ մասնավոր սեփականության առաջացումն իր հետ բերել է անթիվ դժբախտություններ, մյուս կողմից՝ առաջարկում էր ոչ թե վերացնել մասնավոր սեփականությունը, այլ այն հավասարապես բաժանել հասարակության բոլոր անդամների միջև այնպիսի չափերով, որոնք անհրաժեշտ են նրանց կյանքի համար:

թյամբ նշում է, որ «... ազատ ու անկախ մարդը, ինչպիսին նա հանդիսանում էր սկզբնապես, դարձել է, ասես, ամբողջ բնության և հատկապես իր նմանների ստրուկը...»[4]: Այս պայմաններում մարդիկ, թաքցնելով իրենց իսկական մտադրությունները, միմյանց առջև կանգնում են դիմակներով, իսկ հասարակությունը վերածվել է «...շինծու կրքերով արհեստական մարդկանց հավաքածուի...»[5]:

Գերմանական դասական փիլիսոփայության մեջ օտարման պրոբլեմը կապվում է մարդու ակտիվության, նրա գործունեության իդեալիստական մեկնաբանության հետ: Քանի որ գերմանական դասական իդեալիզմի մեջ մարդը նույնացվում է ինքնագիտակցության հետ, ուստի նրա օբյեկտիվացման բոլոր ձևերը դիտվում են որպես օտարում, որն իր հերթին նույնացվում է առարկայացման հետ:

Ֆիխտեի փիլիսոփայության համաձայն՝ ինքնագիտակցությունը, մաքուր «ես»-ը, որը նրա ուսմունքի կենտրոնական կատեգորիաներից է, իր գործունեության մեջ օտարում է առարկան՝ «ոչ-ես»-ը, իսկ այնուհետև վերառնում է այն՝ վերադառնալով ինքն իրեն: Առարկայականության ենթադրումն էլ հենց Ֆիխտեն անվանում է «...յուրահատուկ օտարում»[6]:

Ֆրանսիական լուսավորիչների ավանդույթներին հավատարիմ՝ գերմանական դասական փիլիսոփայության ներկայացուցիչները նշում են բուրժուական առաջադիմության՝ մարդուն թշնամական լինելը: Ֆ.Շիլլերն, օրինակ, նշելով մարդու, նրա ունակությունների տարանջատվածությունը, դրանց պատճառը համարում է աշխատանքի բաժանումը: Իր ժամանակակից հասարակությունը նա նմանեցնում է «...փորձված ժամացույցի մեխանիզմի, որի մեջ անսահման թվով անկեղծան մասերի միացումից առաջանում է իր ամբողջության մեջ մեխանիկական կյանքը... Հավերժորեն գամված ամբողջի առանձին փոքր կտորին՝ մարդն ինքն էլ դառնում է մի կտոր ... Աստիճանաբար ոչնչանում է առանձին կոնկրետ կյանքը հանուն նրա, որպեսզի ամբողջի աբստրակցիան կարողանա պահպանել իր խղճուկ գոյությունը...»[7]:

Քննադատելով իր ժամանակակից քաղաքակրթությունը և հենվելով պատմության գեղագիտական փիլիսոփայության վրա՝ Շիլլերը գտնում էր, որ արվեստն ընդունակ է հաղթահարելու մարդու անդամատվածությունը, վերականգնելու նրա ամբողջականությունը:

---

[4] Տե՛ս *Руссо Ж.Ж.* О причинах неравенства, СПБ, 1907, стр. 82:
[5] Նույն տեղում, էջ 106:
[6] Տե՛ս *Фихте И.* Избранные сочинения, т. 1, М., 1916, стр. 142:
[7] *Шиллер Ф.* Статьи по эстетике, М.-Л., 1935, стр. 213-214:

«Օտարման» հիմնախնդրին խոր ու հանգամանորեն անդրադարձել է Հեգելը, այն դարձնելով իր փիլիսոփայական համակարգի առավել կարևոր, կենտրոնական կատեգորիաներից մեկը: Ընդ որում՝ Հեգելի մոտ այս կատեգորիան օգտագործվում է միմյանցից տարբեր երկու իմաստներով: Մի կողմից «օտարումը» նրա մոտ հանդես է գալիս որպես ամենազոր բացարձակ իդեայի օբյեկտիվացում բնության ու պատմության մեջ, մյուս կողմից՝ որպես բուրժուական հասարակությանը հատուկ որոշակի հարաբերությունների դրսևորում:

Առաջին դեպքում՝ բացարձակ ոգին իր գործունեության ընթացքում իրեն օտարում է իրենից այն բանի համար, որպեսզի ճանաչի իրեն՝ այդ այլակեցության մեջ: Ոգու ծավալումն ընթանում է օտարված ձևագոյացումների մեջ՝ բարոյականությունից մինչև պետություն, որտեղ «սուբստանցիոնալությունն արդեն այլևս իրենից չի ներկայացնում այս կամ այն անհատի սոսկ հատուկ սեփականությունը, այլ գոյություն ունի ինքնին և համընդհանուր ու անհրաժեշտ ձևով իր բոլոր կողմերի մեջ՝ ընդհուպ մինչև մանրագույն դետալները»[8]:

Հեգելը քննության է առնում օտարման պատմական ձևերը, այդ երևույթի կոնկրետ դրսևորումները ստրկատիրական Հռոմում, ֆեոդալիզմի և իր ապրած բուրժուական հասարակարգի պայմաններում: Վերլուծելով անտիկ աշխարհի բարոյականության քայքայումը, նրա վերածումը իրավունքի աբստրակտ համակարգի, Հեգելը օտարումը իրավունքի ասպարեզում դիտում է որպես օտարման առաջին, պարզագույն ձև, որը բնորոշ է քաղաքացիական հասարակությանը: Քաղաքացիական հասարակության պայմաններում սոցիալական իրականությունը թեև ստեղծված է անհատի կողմից, սակայն վերջինիս համար «...անմիջականորեն օտարված ինչ-որ բան է և նրա համար ունի անսասան իրականության ձև», ինքնագիտակցությունը «...ստեղծում է իր աշխարհը և վերաբերում է նրան որպես ինչ-որ օտար աշխարհի...»[9]:

Օտարումն այստեղ դառնում է բուրժուական հասարակության՝ «իրենց օտարված ոգու» աշխարհի համընդգրկող բնութագիր:

Սակայն բուրժուական օտարված իրականության բնութագրման իր խորաթափանցությամբ հանդերձ՝ Հեգելը չկարողացավ ազատվել սոցիալական իրականության պատրանքային ընկալումից, քանզի իրական օտարումը նա մեկնաբանում էր որպես ոգու օտարում, իսկ օտարման հաղթահարումը որպես առարկայի անիրականության տեսական գիտակցում:

---

[8] *Гегель Г.* Соч., т. 12, М., 1938, стр. 186-187.
[9] *Гегель Г.* Соч., т. 4, М., 1959, стр. 263.

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արևմտյան փիլիսոփայական ու սոցիոլոգիական միտքը, անդրադառնալով «օտարման» հիմնահարցին, վերլուծելով նրա մի շարք դրսևորումներ ու չկարողանալով ինչպես հարկն է ըմբռնել դրա էությունը, գնաց բուն օտարման պրոցեսի միստիֆիկացման ուղիով:

Ֆրիդրիխ Նիցշեն (1844-1900), օրինակ, մարդու «օտարումը» մեկնաբանում է մորալի և ամենից առաջ մերձավորի նկատմամբ սիրո քրիստոնեական մորալի ոգով, որի մեջ, ըստ նրա, արտահայտվում է կյանքի ժխտման բնազդը, «դեպի կեցությունը կամքի նողկանքը»[10]: Իսկ «օտարման» հաղթահարումը Նիցշեի համար հավասարազոր է մորալի ժխտմանը («անհրաժեշտ է ոչնչացնել մորալը, որպեսզի ազատագրվի կյանքը»)[11], որն իր հերթին միաձուլվում է գեղագիտական իմմորալիզմի, արիստոկրատական էլիտար կոնցեպցիայի հաստատման հետ:

Վերլուծելով եվրոպական մշակույթի անցած ուղին ու նրա ապագան, Օսվալդ Շպենգլերը (1880-1936) այն համոզմունքն է հայտնում, որ եվրոպական մշակույթը, մահանալով, վերածվում է այնպիսի մի քաղաքակրթության, որի համար բնորոշ են սոցիալական կապերի անդեմ մեխանիզմները:

Այդ դարաշրջանի գերմանական մեկ ուրիշ իդեալիստ փիլիսոփա ու սոցիոլոգ Գեորգ Զիմմելը (1858-1918) իր ապրած ժամանակների մշակույթի ողբերգական վիճակը բացատրում է աշխատանքի բաժանմամբ, որը «աշխատանքի յուրաքանչյուր մասնակցից կտրում է արդյունքը», այնպես որ մասնակի գործունեության մեջ ստեղծված օբյեկտիվությունը զուրկ է «...ներքին շնչավորվածությունից, որը միայն ամբողջական մարդը կարող է ներարկել ամբողջական ստեղծագործությանը»[12]: «Ստեղծագործության ողբերգությունը», ըստ Զիմմելի, պայմանավորված է այն մշտնջենական հակասությամբ, որ գոյություն ունի կենդանի կյանքի ստեղծագործական բաբախման և մշակույթի քարացած օբյեկտիվացված ձևերի միջև:

Այն ընդհանուրը, որ «օտարման» մեկնաբանման հարցում հատուկ է ինչպես վերը նշված, այնպես էլ ավելի ուշ ժամանակների արևմտյան հեղինակներին, հակապատմական մոտեցումն է «օտարման» բացատրության հարցում, «օտարում» ծնող պատճառները տեխնիկայի, այլ ոչ թե սոցիալական հարաբերությունների մեջ որոնելը, «օտարման» և ամեն մի «առարկայացման» նույնացումը, ինչպես նաև «օտարումը» որպես հոգեբանական երևույթ դիտելը:

---

[10] Տես *Ницше Ф.* Соч., т. 9, М., 1910, стр. 11.
[11] Տես նույն տեղում, էջ 137:
[12] "Логос", 1911-1912, кн. 2-3, стр. 24.

20-րդ դարի ֆրանսիական հայտնի փիլիսոփա ու գրող, աթեիստական էկզիստենցիալիստ Ժան Պոլ Սարտրը (1905-1980) և ֆրանսիական իդեալիստ փիլիսոփա, Հեգելի փիլիսոփայության էկզիստենցիալիստական մեկնաբան Ժան Իպպոլիտը (1907-1968), հանդես գալով «օտարման» և «առարկայացման» երևույթների սահմանազատման մարքսյան մոտեցման դեմ՝ գտնում են, որ «օբյեկտիվացումը օտարում է»[13]:

Ռուս կրոնական փիլիսոփա, պերսոնալիզմի ներկայացուցիչ Նիկոլայ Բերդյաևը (1874-1948) այն կարծիքին է, որ «ամեն մի նյութականացված կեցություն օտարված կեցություն է»[14]: Նա մարդու օտարումը և հումանիզմի ճգնաժամը կապում է մեքենայական տեխնիկայի երևան գալու հետ, որը խարխլում է օրգանական հարաբերությունը մարդու և բնության միջև: «Բուրժուական քաղաքակրթությունը,- գրում է նա,- աշխարհի ոչ տիեզերականության սահմանն է: Նրանում կործանվում է ներքին մարդը, փոխարինվում արտաքին ավտոմատիկ մարդով: Քաղաքակրթությունը զարգացրել է հսկայական ստեղծագործական ուժեր... Սակայն քաղաքակրթության տեխնիկական ուժերն իշխում են իր՝ մարդու վրա, նրան դարձնում ստրուկ, սպանում նրա հոգին»[15]:

Տեխնիկայի դերի ֆետիշացումը բնորոշ է նաև էկզիստենցիալիզմի համար: Գերմանական էկզիստենցիալիստ փիլիսոփա Կարլ Յասպերսը (1883-1969), որի փիլիսոփայությունն իր ամբողջության մեջ հանդիսանում է ավանդական լիբերալ-անհատապաշտական հումանիզմի ճգնաժամի արտահայտություն և միաժամանակ այդ ճգնաժամի իմաստավորման փորձ ու դրանից ելք գտնելու անհնարինության գիտակցում, ցավով ու տագնապով նշում է, որ տեխնիկան դարձել է «ինքնուրույն ուժ, որն իր հետ տանում է ամեն ինչ», որի հետևանքով «հասարակությունը վերածվում է մի միասնական մեծ մեքենայի»[16]:

Ֆ.Հայեկեմանին նույնպես հուզում է 20-րդ դարում «մարդկային ինքնօտարման» նոր փուլը, որի պատճառը, ըստ նրա, տեխնիկան է: «Աշխատանքի միջոցները և տեխնիկան,- գում է նա,- օժտված են գործուն միտումով՝ դառնալ իրենց ստեղծողից անկախ և զարգանալ իրենց սեփական օրենքներով: Այդ տեխնիկական օտարումը դառնում է գլխավորը»[17]:

---

[13] Տե՛ս *J.P.Sartre*, Critique de la raison dialectique, P., 1960, p. 234-236: Տե՛ս նաև *J.Hyppolite*, Études sur Marx et Hegel, P., 1955, p. 10:

[14] Տե՛ս *Бердяев Н.* Смысл творчества, М., 1915, стр. 45:

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 285:

[16] Տե՛ս Vom Ursprung und Ziel der Geschichte, Münch, 1949, S. 158-159:

[17] *Cheineman F.* Existenzphilosophie: Lebendig oder Tot, Stuttg., 1954, S. 21.

Դրա հետ մեկտեղ, արևմտյան փիլիսոփայության ու սոցիոլոգիայի մի շարք, այդ թվում ճանաչված ներկայացուցիչներ օտարման երևույթը կապում են օբյեկտիվ սոցիալական պրոցեսների հետ:

Գերմանաամերիկյան հայտնի հոգեբան և սոցիոլոգ, նեոֆրեյդիզմի ականավոր ներկայացուցիչ Էրիխ Ֆրոմը (1900-1980), մատնացույց անելով ժամանակակից աշխարհում մարդու միայնությունն ու լքվածությունը, գրում է, որ ժամանակակից մարդուն սպառնում են «հզոր գերմարդկային ուժերը՝ կապիտալը և շուկան»[18]: Նա օտարման հոգեբանական ֆենոմենները դիտում է որպես որոշակի սոցիալական պատճառների հետևանք, գտնելով, որ կապիտալիզմը մարդու մեջ ձևավորում է իմպուլսիվ ազդակներ (կապիտալիստի մեջ՝ սադիզմ, իշխանության հացիոնալ տենչ, բանվորի մեջ՝ մազոխիզմ), որոնք, առաջանալով, դառնում են բուրժուական հասարակության գոյության ու զարգացման պայմաններից մեկը:

Հետազոտության առարկա դարձնելով «օտարման» տարբեր դրսևորումները՝ ժամանակակից բուրժուական սոցիոլոգիան «օտարումը» դիտում է որպես բնական վիճակ, մարդկային հարաբերությունների կառուցման միակ հնարավոր եղանակ:

Դա հետևանք է այն բանի, որ ընդհանուր առմամբ բուրժուական փիլիսոփայական միտքը սոսկ արձանագրում է սոցիալական կապերի մակերեսային ձևերը՝ չըմբռնելով «օտարման» իսկական պատճառներն ու իրական պրոցեսը և վերջինիս ֆենոմենները հաճախ փորձելով բացատրել բուն «օտարման» դիրքերից:

«Օտարման» պրոբլեմը սկզբունքորեն այլ հիմքի վրա և միանգամայն այլ հայեցակետից քննության առան ու մեկնաբանեցին մարքսիզմի հիմնադիրները, որը, սակայն, ուրիշ՝ ավելի լայն ու ծավալուն թեմա է՝ արժանի հատուկ լուսաբանման:

ON PHILOSOPHIC-SOCIOLOGICAL SENSE OF THE PHENOMENON OF "ALIENATION" AND ITS PLACE IN HUMANISTIC PROBLEMS

In the article, analyzed is the issue of the essence and historical evolution of the problem of "alienation" and its relation to humanism.

In this connection, the views of the problem of a number of the most prominent representatives of the European philosophic thought (J-J. Rousseau, J.G. Fichte, F. Schiller, G.W.F. Hegel, F. Nietzsche, J-P. Sartre, E. Fromm, and others) are considered; the specific features of their interpretations, as well as the inherent drawbacks and limitations are brought out.

---

[18] Տես *Fromm E.*, Escape from freedom, N.Y., 1941, p. 62-63: